ՀՐԱՎԵՐ

« ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու հ. 28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « Գ28ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1»:
Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի Երևանյան խճուղի 91 հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 30-ը ժամը $9^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Մարատ Մարտիրոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Գյումրու հ. 28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում, ք.Գյումրի Երևանյան խճուղի 91 հասցեով, 2014թ. դեկտեմբերի 30-ին, ժամը $9^{00}$-ին:
Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու հ. 28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝սննդի ծանրոցների ձեռքբերումը:
<<Գյումրու հ. 28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝սննդի ծանրոցների մատուցման (N1 չափաբաժին) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը (N1,2,3,4 հավելվածներ) կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 5 )՝մեկ բնօրինակ և երկու պատճեն, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1)՝ մեկ բնօրինակ և երկու պատճեն: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Գյումրու հ. 28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gyumri28@mail.schools.am :

**Հարգանքով ՝ Գյումրու հ.28 հիմական դպրոց**

Հավելված 5
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<Գ28ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Դ Ի Մ Ո Ւ Մ
## Գնման ընթացակարգին մասնակցելու

______________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Գյումրու h.28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի **<<Գ28ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1>>** ծածկագրով հայտարարված ընթացակարգի N1 չափաբաժնին և հրավերի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

______________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե>>:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

______________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

______________ 20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< Գ28ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1 >> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<**Գ28ՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1** >> ծածկագրով շրջանակային ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ինքնարժեքի հաշվարկ | | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | ԱԱՀ-և* | |
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| | | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

_______________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

________________________2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

# ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ28ՀԴ- ՇՀԱՊՁԲ-15/1

Ք. Գյումրի

<< >> << >> 2014 թ.

**ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու հ.28 հիմնական դպրոց>>** ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն **Մ.Առաքելյանի**, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, (այսուհետև՝ Գնորդ) և , և ՍՊԸ-ն /Ա/Ձ, ՓԲԸ/, ի դեմս Ընկերության տնօրեն ----------------, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի **N 1 հավելվածով**՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքը _ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար։

**2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին։

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի **N 2 հավելվածով** սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն **30 աշխատանքային օր**,որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի **7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:**

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ սույն պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը .

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), Եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք,որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ սույն պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ՝ -------------(-----------------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը կսահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում**:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա **N 3 հավելվածով**՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն նույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվաան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից **ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):**

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է **տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է **տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:**

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն **չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

**9.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ,Գնումների մասին« ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:**

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար **անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի**: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված **շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի**: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**Գնորդ**

ՀՀ Շիրակի մարզի

<<Գյումրու հ.28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

**Գտնվելու վայրը**

ք. Գյումրի Երևանյան խճուղի 91

<< Հայբիզնեսբանկ>> Գյումրու մասնաճյուղ

ՀՀ 16037002211500

ՀՎՀՀ 08800705

Տնօրեն____________________/Մ.Ա.Առաքելյան/

**Հավելված 1**
**N Գ28ՀԴ- ՇՀԱՊՁԲ-15/1**
**ծածկագրով պայմանագրի**

# Տեխնիկական բնութագիր

## 1.Գնման առարկայի բնութագիրը

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|---|
| 1 | Սննդի ծանրոց | Հատ | Տարբեր տեսակի սննդամթերք և սննդամթերքի օգտագործման հետ կապված պարագաներ պարունակող փաթեթ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |

## 2. Սննդի ծանրոցների բաղադրամասերը և նրանց տեխնիկական բնութագրերը

| | Սննդի ծանրոցի բաղադրամասեր | Չափման միավոր | Տեխնիկական բնութագրեր |
|---|---|---|---|
| 1 | Բուտերբրոդի հաց | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ ,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Տեղական արտադրության:Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 2 | Յոգուրտ | գրամ | Յոգուրտ, պատրաստված կաթնամթերքից, մրգային, առանց կոնսերվանտների, փաթեթավորված մինչև 150գ տարողությամբ սպառողական տարաներով, յուղայնությունը 0.1-4.5 % ՀՍՏ 245-2005: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշման: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % : |
| 3 | Վաֆլի | գրամ | Առանց միջուկի, չափածրարված տուփերով կամ կշռով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90% |
| 4 | Բուլկի | գրամ | Պատրաստված բարձր տեսակի ալյուրից, թարմ և փափուկ, թողարկված կշռով և հատով,փաթեթավորված կամ առանց փաթեթավորման, ՀՍՏ 44-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Տեղական արտադրության: |
| 5 | Հյութ | միլիլիտր | Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 6 | Սուֆլե | գրամ | Տեղական արտադրության կոնֆետ շոկոլադապատ մրգային, դոնդողային, դոնդողամրգային համեղանյութերով: ԳՕՍՏ-4570-93, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 7 | Կոնֆետ/իրիս | գրամ | Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Տեղական արտադրության |
| 8 | Քաղցրաբլիթ | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 9 | Թռչնի կաթ | գրամ | Ըստ ԳՕՍՏ-ի, Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Տեղական արտադրության: |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Պանրիկ | գրամ | Պատրաստված թարմ կովի կաթից, անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%: Տեղական արտադրության: |
| 11 | Անձեռոցիկ | հատ | Անձեռոցիկ սեղանի,տեղական արտադրության,թղթի 1մ² մակերեսի զանգվածը 20գ,խոնավությունը 7%, փափուկ թղթից: Մակնշումը և փաթեթավորումը ` ըստ ՀՀ Կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված <<Կենցաղային և սանհիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>: |
| 12 | Գդալ | հատ | Պլաստմասե, նախատեսված սննդի համար,մեկանգամյա օգտագործման համար: <<Կենցաղային և սանհիգիենիկ նշանակության ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի |
| 13 | Պանիր, լոռի | գրամ | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:Տեղական արտադրության: |
| 14 | Երշիկ | գրամ | Երշիկ եփած՝ պատրաստված տավարի եւ խոզի մսերից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը` և մակնշումը ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի եւ մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" եւ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |
| 15 | Թթվասեր, տեղական | միլլիտր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը` 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը` 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % |
| 16 | Թխվածքաբլիթ | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 17 | Պեչենի | գրամ | Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%, ԳՕՍՏ 14033-96: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի |
| 18. | Շոկոլադապատ թխվածքաբլիթ | գրամ | Թխվածքաբլիթ կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը 3-10% շաքարի զանգվածային մասը 20-27%, յուղայնությունը 3-30%,պատված շոկոլադի 1-2 մմ հաստություն ունեցող շերտով: Անվտանգությունը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: |

3.Սննդի ծանրոցները պետք է փաթեթավորվեն և մատակարարվեն վերևում սահմանված տեխնիկական բնութագրում ընդգրկված սննդամթերքի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների հետևյալ պարունակությամբ.

| Ծանրոցի բաղադրիչներ | Միավորի զանգված,ծավալ | Քանակ |
|---|---|---|
| Տարբերակ 1 | | |
| Բուտերբրոդ պանրով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Բուլկի | 80գ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Վաֆլի | 12գ | 5 |
| Սուֆլե | 12գ | 2 |
| Կոնֆետ/իրիս | 6գ | 6 |
| Պեչենի | 8գ | 4 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 2 | | |
| Բուտերբրոդ երշիկով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Պեչենի | 8գ | 4 |
| Քաղցրաբլիթ | 12գ | 3 |
| Թոչնի կաթ | 22գ | 4 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 3 | | |
| Բուտերբրոդ պանրով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Քաղցրաբլիթ | 12գ | 2 |
| Կոնֆետ/իրիս | 6գ | 3 |
| Յոգուրտ | 100գ | 1 |
| Թոչնի կաթ | 22գ | 2 |
| Պանրիկ | 40գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| Տարբերակ 4 | | |
| Բուտերբրոդ երշիկով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100գ | 1 |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 16գ | 4 |
| Սուֆլե | 12գ | 4 |
| Կոնֆետ/իրիս | 6գ | 6 |
| Վաֆլի | 12գ | 5 |
| Բուլկի | 80գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |

| Տարբերակ 5 | | |
|---|---|---|
| Բուտերբրոդ պանրով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Քաղցրաբլիթ | 12գ | 4 |
| Կոնֆետ/իրիս | 6գ | 5 |
| Յոգուրտ | 100գ | 1 |
| Շոկոլադապատ թխվածքաբլիթ | 16գ | 2 |
| Թռչնի կաթ | 22գ | 3 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |
| **Տարբերակ 6** | | |
| Բուտերբրոդ երշիկով | 100գ | 1 |
| Հյութ | 200մլ | 1 |
| Թթվասեր | 100մլ | 1 |
| Պեչենի | 8գ | 6 |
| Վաֆլի | 12գ | 5 |
| Թռչնի կաթ | 22գ | 5 |
| Բուլկի | 80գ | 1 |
| Անձեռոցիկ | | 1 |
| Գդալ | | 1 |

Յուրաքանչյուր միավոր սննդի փաթեթ պետք է փաթեթավորված լինի առանձին սննդի համար նախատեսված տոպրակով:
Մատակարարումները պետք է իրականացվեն 2015 թ. ընթացքում՝ մատակարարի ուժերով և միջոցներով,աշխատանքային օրերին ,մինչև առավոտյան ժամը 11⁰⁰:

Գնորդ

Վաճառող

ստորագրություն

ստորագրություն

**Հավելված 2**
<<Գ28ՀԴ ՇՀԱՊՁԲ 15/2>> ծածկագրով
պայմանագրի

# Գնման ժամանակացույց*

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Նախարարություն |
|---|---|---|---|---|
| | | | | |

Ծրագրի անվանումը՝ ____________________

/հազար դրամ/

| Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման | Ապրանքի անվանումը | Տնտեսագիտական դասակարգման հոդվածը | Չափման միավորը | Միավորի նախահաշվային գինը | Նախատեսվում է գնել 2015թ. պետական բյուջեի միջոցների հաշվին | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | I եռ. | | II եռ. | | III եռ. | | IVեռ. | | | |
| | | | | | միջոց | գինը | միջոց | գինը | միջոց | գինը | միջոց | միջոց | միջոց | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 15897200 | Սննդի ծանրոցներ | 423600 | հատ | | | | | | | | | | 5567 | |

* *Մատակարարվող ծանրոցների միավորի գինը և քանակը՝ ըստ եռամսյակների կներկայացվեն կնքվելիք համաձայնագրում՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց:*

**Գնորդ**
ՀՀ Շիրակի մարզի
<<Գյումրու h.28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
**Գտնվելու վայրը**
ք. Գյումրի Երևանյան խճուղի 91

ՀՀ 16037002211500

ՀՎՀՀ 08800705

Տնօրեն____________________/Ս.Ա.Առաքելյան/
Ստորագրություն

ԿՏ

**Վաճառող**

**Գտնվելու վայրը**

ՀՀ____________________

ՀՎՀՀ____________________

Տնօրեն____________________/ /
ստորագրություն

ԿՏ

**Հավելված 3**
«____» ______________ 20 թ. կնքված
N **«Գ28ՀԴ -ՇՀԱՊՁԲ-15/1»**
ծածկագրով գնման պայմանագրի

# Վճարման ժամանակացույց*

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.-ի ընթացքում,ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը Տարի |
| 1. | Սննդի ծանրոցներ | | | | | 100% |

** Վճարման ենթակա գումարները ՝ փոխոսային արտահայտությամբ աճողական կարգով կներկայացվեն կնքվելիք համաձայնագրում՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց:*

**Գնորդ**
ՀՀ Շիրակի մարզի
<<Գյումրու h.28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ
**Գտնվելու վայրը**
ք. Գյումրի Երևանյան խճուղի 91

ՀՀ 16037002211500

ՀՎՀՀ 08800705

Տնօրեն____________________/Մ.Ա.Առաքելյան/
Ստորագրություն

ԿՏ

**Վաճառող**

**Գտնվելու վայրը**

ՀՀ____________________

ՀՎՀՀ____________________

Տնօրեն____________________/ /
ստորագրություն

ԿՏ

Հավելված 4

«-------»-------------- 2014 թ

N « Գ28ՀԴ- ՇՀԱՊՁԲ-15/1 » պայմանագրի

| Վաճառող | Գնորդ |
|---|---|
| ________________________________ | ՀՀ Շիրակի մարզի |
| | <<Գյումրու հ.28 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ |
| Գտվելու վայրը | Գտնվելու վայրը |
| | ք. Գյումրի Երևանյան խճուղի 91 |
| ՀՀ ____________________ | ՀՀ 16037002211500 |
| ՀՎՀՀ ____________________ | ՀՎՀՀ 08800705 |
| ____________________________ | Տնօրեն____________________/Մ.Ա. Առաքելյան/ |
| ԿՏ | ԿՏ |

## ՀԱՆՁՆՄԱՆ- ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

«__» ______ 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» ______ 20 թ.

Պայմանագրի համարը՝ NԳ28ՀԴ- ՇՀԱՊՁԲ-15/1

Գնորդը, ի դեմս _____________________________________________ և Վաճառողը, ի դեմս _______________________հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված մատակարարումները / այսուհետև մատակարարումները / համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում վաճռողը «__» ______ 20 թ.-ից «__» ______ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները:

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարարումների կատարման ժամկետները | Վճարման ենթակա գումարը / հազ. դրամ / | Վճարման ժամկետը /ըստ ժամանակա-ցույցի / |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | --------------- | --------------- | ---------------- | --------------- |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Մատակարարումը հանձնեց | Մատակարարումը ընդունեց |
|---|---|
| ________________________ | ________________________ |
| / ստորագրություն / | / ստորագրություն / |
| ________________________ | ________________________ |
| / Անուն Ազգանուն / | / Անուն Ազգանուն / |
| Կ.Տ | Կ.Տ |